ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

5 հուլիսի 2016 թվականի **թիվ 17** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումների VI հատորում փոփոխություն կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի օգոստոսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում, ավիացիոն շարժիչների առանձին տեսակների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 63 որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝

կիրառել Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումները (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի մարտի 12-ի թիվ 4 հանձնարարականի հավելված)՝ հաշվի առնելով Եվրասիական

տնտեսական միության լրացուցիչ ծանոթագրությունների 84-րդ խմբի հետեւյալ բովանդակությամբ 5-րդ ծանոթագրությամբ լրացնելու մասով փոփոխությունը՝

«5. 8407 10 000 3 ստորաենթադիրքում «վերթիռային հզորություն» ("take-off power") եզրույթը նշանակում է առավելագույն հզորություն, որը զարգացնում է ավիացիոն մխոցային շարժիչը:

«Վերթիռային հզորությունը» ("take-off power") նշվում է տեխնիկական փաստաթղթերում եւ (կամ) ուղեկցող փաստաթղթերում, չափվում է կիլովատտով կամ ձիաուժով (1 կՎտ համապատասխանում է 1,35962 ձիաուժի):»:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան